14 փետրվարի 2013 թվականի N 124 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 574-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին» N 574-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 3-րդ բաժնի՝

ա. վերնագրում «2008-2012 թվականների» բառերը փոխարինել «2008-2013 թվականների» բառերով,

բ. «Տրանսպորտային համակարգ» գլխի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.	Նոր տնտեսական պայմաններին համապատասխան օրենսդրական դաշտի ընդլայնումը, տրանսպորտային կազմակերպությունների և ուղևորների իրավական պաշտպանվածության ապահովումը	«Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Հայաստանի Հանրապետության քաղաքներում գործող վերգետնյա և ստորգետնյա էլեկտրական տրանսպորտի գործունեության կանոնակարգում	Լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ չեն պահանջվում:	2013 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

13_0124